ՀՈԴՎԱԾՆԵՐ

ԸՆԴԴԵՄ ՍՄԿԿ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՂԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ

Մ. Մ. ՀԱԿՈԲՅԱՆ

Սոցիալիզմի և կապիտալիզմի միջև մղվող գաղափարական սուր պայքարի կարևորագույն տեղամասերից է ազգային հարցը։ «Զգտելով թուլացնել սոցիալիզմի դիրքերը, պառակտում մտցնել միջազգային կոմունիստական ու բանվորական շարժման շարքերի մեջ, ճնշել ազգային-ազատագրական շարժումը, իմպերիալիստները լայնորեն գիմում են ռասիզմի բորբոքմանը, փորձում են ազգային հողի վրա տարանջատել աշխատավորության տարբեր ջոկատներին։

Բուրժուական պրոպագանդան ձգտում է նացիոնալիստական ճայացքներ արմատավորել սոցիալիստական երկրների ժողովուրդների գիտակցության մեջ, նացիոնալիզմն օգտագործել սոցիալիստական կարգերի խարխլման համար»[1]։

Լենինյան ազգային քաղաքականությունը խեղաթյուրող բուրժուական կեղծարարների պայքարի ձևերը բազմազան են։ Ոմանք պնդում են, թե մարքսլենինյաններին ազգային հարցը չի հետաքրքրում, ուրիշները ջանում են հավասարության նշան դնել ցարական Ռուսաստանի գաղութատիրական քաղաքականության և ՍՄԿԿ ազգային քաղաքականության միջև։

Չնայած ելակետային որոշ տարբերություններին, նրանց միավորող հիմնական սկզբունքը հակասովետիզմն է, ձգտումը ծուռ հայելու մեջ ներկայացնելու ՍՄԿԿ ազգային քաղաքականությունը, թուլացնելու ՍՍՀՄ-ում ազգային հարցի լուծման համաշխարհային պատմական նշանակությունը։ Դա պարզ կերպով դրսևորվեց 1965 թ. Վիեննայում կայացած պատմաբանների միջազգային XII կոնգրեսում[2], ԱՄՆ-ում հրատարակվող «Կոմունիզմի պրոբլեմները» ամսագրում հրապարակված հոդվածներում[3], ամերիկյան, ֆրանսիական, արևմտյանգերմանական և այլ երկրների «սովետոլոգների» հակասովետական աշխատություններում[4]։

Բուրժուական սոցիոլոգները ժխտում են ազգային հարցի լուծման հնարավորությունը, հանդես գալիս նրա դասակարգային մոտեցման դեմ։ Այսպես, Վալտեր Կոլարզը գտնում է, որ մարքսիստական ուսմունքը անկարող է

---

[1] *Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության կազմավորման 50-ամյակի նախապատրաստության մասին։ ՍՄԿԿ կենտկոմի որոշումը, Երևան, 1972, էջ 30—31։*

[2] Л. В. Черепин, 12 международный конгресс историков (История СССР, 1966, № 1), А. А. Губер, 12 международный конгресс исторических наук (Вопросы истории. 1966. № 3).

[3] „Problems of Communism", September-October, 1967, Special issus. Nationalities and Nationalism in the USSR.

[4] W. Kolarz, Russia and Her Colonies, London, 1953. Communism and Kolonialism, London, 1964. A. Low, Lenin and the Question of the Nationality, New-York-1958. R. Pipes, The Formation of the Soviet Union, Cambridge, 1954.

ընդգրկել էթնիկական ու ռասսայական պրոբլեմը իր բոլոր բարդություններով ու նրբություններով։ «Կոմունիստները,— պնդում է Կոլարը,— ազգային անտոգոնիզմի արմատները որոնելով գլխավորապես մարդկային հասարակության կառուցվածքում, արհամարհում են հոգեբանական և բարոյական կարևորագույն գործոնները, որոնք վճռական դեր են խաղում ազգային թշնամանքի ծագման հարցում, նրանք առանձնապես անտեսում են ազգային և ռասսայական ատելության այն իռացիոնալ զգացմունքները, որոնք կազմում են մարդու մեջ չարի սկիզբը»[5]։ Ազգը, նրա պնդմամբ, ոչ թե հասարակական-պատմական ընդհանրությունն է, այլ սոցիալական, հոգեբանական կատեգորիա։ Կեղծելով փաստերը՝ ազգային հարցի բուրժուական «տեսաբանները» փորձում են ապացուցել, որ Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը ազգային հարցով առհասարակ չեն զբաղվել։ Գ. Կոխը գրում է. «Մարքսի և Էնգելսի մոտ չի եղել ազգային հարց, քանի որ նրանք ելնում էին այն դրույթից, որ «պրոլետարները հայրենիք չունեն»[6]։

Իրականում Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը բացահայտելով ազգային հարցի սոցիալ-տնտեսական արմատները, նշեցին նրա լուծման ռեալ ուղին։

Նրանք ապացուցեցին, որ ազգային ճնշման տնտեսական հիմքը արտադրության միջոցների մասնավոր սեփականությունն է։ Այստեղից նրանք եզրակացնում էին, որ ազգային հարցը կարող է լուծվել միմիայն պրոլետարիատի հաղթական հեղափոխության շնորհիվ։ «Կոմունիստական կուսակցության մանիֆեստում» ասված է. «Ինչ չափով որ ոչնչացվելու է մի անհատի շահագործումը մյուսի կողմից, այն չափով էլ ոչնչացվելու է մի ազգի շահագործումը մյուսի կողմից։ Ազգերի ներսում եղած դասակարգերի անտագոնիզմի հետ միասին կվերանան նաև թշնամական հարաբերությունները ազգերի միջև»[7]։

Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը ցույց էին տալիս, որ ազատ չի կարող լինել այն ազգը, որը ճնշում է ուրիշ ազգերի, որ ազգային հարցում պրոլետարիատի գլխավոր լոզունգը ազգի ինքնորոշման իրավունքի իրականացումն է[8]։

ՍՄԿԿ ազգային քաղաքականության բուրժուական կեղծարարները ճիշտ նույնպես են վարվում լենինիզմի հետ։

Հակակոմունիստ Ա. Լոուն հայտարարում է, որ լենինիզմի համար ազգային հարցը ինքնուրույն նշանակություն չունի, քանի որ «ազգային գործոնը նրա հայացքներում ունի միայն գործնական արժեք»[9]։

ՍՄԿԿ ազգային քաղաքականության կեղծարարները պնդում են, որ բոլշևիկները միշտ էլ աշխատել են ազգային գործոնը օգտագործել իրենց շահերի համար։ Ա. Լոուն գրում է. «Միակ բանը, որով շահագրգռված են մարքսիստ-լենինյանները, դա դասակարգային պայքարն է, պրոլետարիատի կողմից իշխանության զավթումը»[10]։

Հոկտեմբերյան հեղափոխությունից դեռ շատ առաջ Վ. Ի. Լենինը մշակեց ազգի մարքսիստական տեսությունը և բնութագրեց այն, գրելով՝ «Ազգերը հա-

---

5 W. Kolarz, Communism and Kolonialism, London, 1964, p. 137.

6 („Der Bolschewismus", S. 156).

7 К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 4, стр. 445.

8 К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 20, стр. 459.

9 A. Low, Lenin and the Question of the Nationality, New-York, 1958, p. 29.

10 Նույն տեղում, էջ 28։

սարակական զարգացման բուրժուական դարաշրջանի անխուսափելի արդյունքը և անխուսափելի ձևն են»[11]։

«Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության ծրագրի նախագիծը» հոդվածում Վ. Ի. Լենինը առաջ քաշեց ամենահիմնականը՝ ազգի ինքնորոշման իրավունքը՝ «պետության կազմի մեջ մտնող բոլոր ազգերի ինքնորոշման իրավունքի ճանաչումը»[12]։

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Վ. Ի. Լենինը հատկապես խորացրեց ազգի ինքնորոշման իրավունքի վերաբերյալ ծրագրային կետը։ Նրա առաջարկով Պորոնինոյի խորհրդակցության բանաձևում նշվեց. «Ինչ վերաբերում է ցարական միապետության կողմից ճնշված ազգերի ինքնորոշման իրավունքին, այսինքն՝ անջատվելու և ինքնուրույն պետություն կազմելու իրավունքին, ապա ս. դ. կուսակցությունը անպայման պետք է պաշտպանի այդ իրավունքը»[13]։

Այսպիսով Վ. Ի. Լենինը և կոմունիստական կուսակցությունը դեպի սոցիալիստական հեղափոխություն գնացին պարզորոշ ազգային հետևյալ ծրագրով.

ա) Հարկադրանքի բոլոր և ամեն տեսակի ձևերի վճռական ժխտում ազգությունների նկատմամբ. բ) ժողովուրդների հավասարության և սուվերենության ճանաչում, իրենց բախտը որոշելու գործում. գ) ժողովուրդների միավորումը կարող է իրականացվել միայն համագործակցության և կամավորության սկզբունքներով, դ) այդպիսի միավորման իրագործումը հնարավոր է միայն կապիտալի իշխանությունը տապալելու միջոցով[14]։

Հարվարդի համալսարանի պրոֆեսոր Ռ. Փայփսը գտնում է, որ ՌՍԴԲԿ ազգային ծրագիրը Ռուսաստանում ազգային հարցի լուծման առումով միանդամայն անբավարար է, որովհետև այն, «ազգային փոքրամասնություններին առաջարկում է ընտրություն կատարել ասիմիլյացիայի և լրիվ անկախության միջև»[15]։ Նա նշում է, որ սովետական իշխանության հաստատումից հետո Վ. Ի. Լենինը ազգային հարցում հրաժարվեց իր հին հայացքներից և ուժով ճնշեց ոչ ռուս ժողովուրդների անջատվողական ձգտումները։ «Սովետական ազգային քաղաքականության հիմքերը,— գրում է Ռ. Փայփսը,— ընկած են ոչ թե Լենինի մինչև 1917 թ. գրված աշխատություններում, այլ այն պրակտիկ հրահանգներում, որոնք հրատարակվում էին քաղաքացիական պատերազմի ամենաթեժ պահին»[16]։

Նա կարմիր բանակի կողմից 1918—1920 թթ. քաղաքացիական պատերազմի տարիներին սպիտակ գվարդիականների և ազգային հակահեղափոխական ուժերի ջախջախումը փորձում է պատկերել որպես «ազգային շարժումների զինված ճնշում»։

Պատմության բուրժուական կեղծարարները նաև փորձում են, «ապացուցել», որ ազգային հանրապետություններում սովետական կարգերի հաղթա-

---

11 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 21, էջ 78։

12 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 6, էջ 18։

13 ՍՄԿԿ-ն համագումարների, կոնֆերանսների... բանաձևերում և որոշումներում, մաս I, Երևան, 1954, էջ 393։

14 Նույն տեղում, էջ 208—209։

15 R. Pipes, The Formation of the Soviet Union, Cambridge, 1954, p. 49.

16 „Problems of Communism", p. 127.

նակը իրականացվել է «ռուսական բոլշևիկների» ճնշման ներքո և այդ հանրապետությունները ոչ մի ինքնուրույնություն չեն ունեցել։ Ազգային հանրապետությունների առաջացումը համարելով «անօրինական» և «հակաժողովրդական», արևմտագերմանական պատմաբան Գ. Ռաուխը առաջին ուկրաինական կառավարությունը անվանում է «կարծեցյալ ուկրաինական», որը, իբր, առաջացել է Պետերբուրգի ճնշման տակ[17]։ Բելոռուս ազգին նվիրված իր հատուկ հետազոտությունում նույն կարծիքն է պաշտպանում Ն. Վեյկերը[18]։

Խեղաթյուրվում է նաև Անդրկովկասում սովետական իշխանության հաստատման և Անդրկովկասի սովետական հանրապետությունների ստեղծման պատմությունը։ Նենդափոխելով պատմական փաստերը, բուրժուական պատմաբաններ՝ Ալենը և Մուրատովը «Кавказское сражение» (1828—1921 гг.) գրքում ոչ մի տարբերություն չեն դնում ցարական Ռուսաստանի գաղութատիրական քաղաքականության և Սովետական Ռուսաստանի ազատագրական դերի միջև։

ՍՄԿԿ չի անտեսում և չի ֆետիշացնում ազգային հարաբերությունները։ Վ. Ի. Լենինը ժամանակին ծաղրում էր նրանց, ովքեր գտնում էին, թե սոցիալիզմի հաղթանակած պետությունը գոյություն կունենա առանց սահմանների, որ սահմանները կորոշվեն «միայն արտադրության շահերով»[19]։

Սովետական պետությունն իր գոյության առաջին իսկ օրերից ձեռնամուխ եղավ լենինյան ազգային ծրագրի կենսագործմանը։ «Ռուսաստանի ժողովուրդների իրավունքների դեկլարացիան» հռչակեց բոլոր ժողովուրդների հավասարության իրավունքը։ Փորձելով վարկաբեկել այդ պատմական փաստաթուղթը Գ. Կոխը հայտարարում է, թե դա «պրոպագանդիստական տրյուկ է», քանի որ անջատման իրավունքը մտածված է «առանց նրանից օգտվելու պրակտիկ հնարավորությունների»[20]։

Այդ փաստաթղթին հետևեցին «Ֆինլանդիայի պետական ինքնուրույնության մասին» (1917 թ. դեկտեմբերի 18), «Թուրքահայաստանի ինքնորոշման մասին» (1917 թ. դեկտեմբերի 29) դեկրետները։ ՌՍՖՍՀ Ժողկոմսովետը ընդունեց նաև Ուկրաինայի և Մերձբալթյան հանրապետությունների ինքնորոշման իրավունքը։

Հեթհոկտեմբերյան ժամանակաշրջանում Վ. Ի. Լենինը և կոմունիստական կուսակցությունը հսկայական աշխատանք կատարեցին ազգային հանրապետությունների սովետն իրավունքների զարգացման, Ռուսաստանի բոլոր ժողովուրդների համախմբման և ՍՍՀՄ-ի կազմակերպման ուղղությամբ։

«ՍՍՀՄ-ի կազմավորումը իր քաղաքական նշանակությամբ և սոցիալ-տնտեսական հետևանքներով,— ասված է ՍՄԿԿ կենտկոմի որոշման մեջ,— ակնառու տեղ է գրավում սովետական պետության պատմության մեջ։ Այդ պատմական իրադարձությունը պրոլետարական ինտերնացիոնալիզմի գաղափարախոսության համոզիչ հաղթանակն է, կոմունիստական կուսակցության լենինյան ազգային քաղաքականության իրականացման բեղմնավոր արդասի-

---

17 G. Von Rauch, Rusland. Staatlice Einelt und die nationale Veilfalt, München, 1953, s. 112.

18 N. Vaker, Belorussia, The Making of a Nation, Harvard, 1956, p. 100—107.

19 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 22, էջ 435։

20 „Der Bolschewismus", s. 153

քը»[21]։ Բուրժուական պատմագիտությունը խեղաթյուրում է նաև ՍՍՀՄ-ի կազմավորման պատմությունը։

«Սովետական հեղինակների փորձերը,— գրում է Ս. Բլոմբերգչենը,— ՍՍՀՄ-ը ներկայացնելու որպես իրոք սովերեն հանրապետությունների միություն, չեն կարող համոզել անկողմնակալ դիտորդներին, քանի որ այդ հանրապետությունները ավելի չեն, քան պրովինցիաներ և ունեն միայն ինքնուրույնության սահմանափակ հնարավորություններ»[22]։

ՍՍՀՄ ժողովուրդների փայլուն հաջողությունները պատմության կեղծարարներին չեն հետաքրքրում։ Ավելին. մեր գաղափարական հակառակորդները փորձում են աշխարհի ժողովուրդների աչքում վարկաբեկել սոցիալիզմին հատուկ տնտեսական շինարարության ուղիներն ու մեթոդները, սոցիալիստական ազգերի զարգացման փորձը։

ՍՄԿԿ և սովետական պետության ազգային քաղաքականությունը համարելով գաղութատիրական, նրանք խեղաթյուրում են ինդուստրացման, կոլեկտիվացման և կուլտուրական հեղափոխության պատմությունը։ Վ. Կոլարզը գտնում է, որ «Ուզբեկստանի և Ղազախստանի ինդուստրիալ զարգացման օրինակը թույլ զարգացած երկրների համար չի կարող օրինակ հանդիսանալ»[23]։ Հակակոմունիստները պնդում են, թե սովետական ազգային հանրապետությունների զարգացման թռիչքը պայմանավորված է նրանց արտադրողական ուժերի ցածր մակարդակով և «տեխնոլոգիական» գործոններով։ Ոմանք էլ գտնում են, որ ինդուստրացման այդպիսի բարձր տեմպերի կարելի է հասնել «յուրաքանչյուր ռեժիմի», ցանկացած այլ սոցիալ-տնտեսական կառուցվածքի պայմաններում[24]։

Եթե 1969 թ. 1913 թ. համեմատ ՍՍՀՄ ամբողջ արդյունաբերությունը աճել էր 84 անգամ, ապա ազգային հանրապետություններում այն կազմել է. Տաջիկական ՍՍՀ՝ 164, Հայկական ՍՍՀ՝ 162, Մոլդավական ՍՍՀ՝ 137, Ուզբեկական ՍՍՀ՝ 90 անգամ և այլն[25]։

Ազգային հանրապետությունների զարգացման բարձր տեմպեր են նախատեսվում է նաև ՍՍՀՄ ժողտնտեսության զարգացման 9-րդ հնգամյա պլանում[26]։

Այսպիսով, սեփական ինդուստրիայի ստեղծումը, ՍՍՀՄ ազգային հանրապետությունների արտադրության արդյունավետ տեղաբաշխումը, բնական հարստությունների պլանաչափ շահագործումը, աշխատանքի սոցիալիստական բաժանումը նրանց տնտեսական հետամնացության հաղթահարման, սոցիալիստական հասարակարգի կառուցման կարևորագույն պայմանն է։

Մեր երկրում Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանկից հետո սոցիալիստական վերափոխումների հիման վրա իրականացվեց կուլտուրական հեղափոխություն։ Վիթխարի հաջողություններ ձեռք բերվեց ժողովրդական կըր-

---

21 Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության կազմավորման 50-ամյակի նախապատրաստության մասին։ ՍՄԿԿ Կենտկոմի որոշումը, Երևան, 1972, էջ 4։

22 „Problems of Communism", p. 126.

23 W. Kolarz, Russia and Her Colonies, London, 1953, p. 58.

24 „Central Asia Rewiew", London, 1956, N 3, p. 213.

25 Народное хозяйство СССР в 1969 году (статистический ежегодник). «Статистика», М., 1970, стр. 148.

26 ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1971—1975 թթ. հնգամյա պլանի ՍՄԿԿ XXIV համագումարի դիրեկտիվները, Երևան, 1971, էջ 84—85։

թության ասպարեզում։ Բնակչության գրագիտության մակարդակը առանձնապես աճեց ազգային հանրապետություններում։ 1897 թ. մարդահամարի տվյալներով Ռուսաստանի կենտրոնական շրջաններում գրագիտությունը կազմում էր 26,9%, Ուկրաինայում՝ 27,9, ապա Թուրքմենիայում՝ 7, Հայաստանում՝ 9,2, Տաջիկստանում՝ 2,3, Կիրգիզիայում՝ 3,1%։ 1959 թ. մարդահամարի տվյալներով՝ ՍՍՀՄ բնակչության 97,0%-ը գրագետ էր։ Այժմ, Սովետական Միությունը համատարած գրագիտության երկիր է։ Սովետական իշխանության տարիներին կրթության և կուլտուրայի ասպարեզում մեծ նվաճումներ ձեռք բերեց նաև հայ ժողովուրդը։ 1965—1966 ուսումնական տարում ՀՍՍՀ-ում գործում էին 1291 հանրակրթական դպրոցներ՝ 524 հազար աշակերտով, աշխատում 29 հազար ուսուցիչ։ 1914 թ. համեմատ 1966 թ. հանրապետության դպրոցների թիվը ավելացել էր 2,8, տվորողներինը՝ 15, ուսուցիչներինը՝ 26 անգամ[27]։

Ազգային կուլտուրայի զարգացման ասպարեզում մեծ առաջընթաց կատարեցին նաև մյուս հանրապետությունները։ ՍՍՀՄ 40 ժողովուրդներ, որոնք մինչև հեղափոխությունը չունեին դիր ու գրականություն, ձեռք բերեցին այն։ Սովետական իշխանության տարիներին ՍՍՀՄ-ում հրատարակվել են 145 լեզվով գրքեր, որից 89-ը ՍՍՀՄ ժողովուրդների լեզուներով[28]։

Սովետական մարդկանց կողմից ռուսաց լեզվի, ՍՍՀՄ մյուս ժողովուրդների լեզուների կամավոր ուսումնասիրությունը նպաստում է ժողովուրդների բարեկամության ամրապնդմանը, ազգերի մերձեցմանը։ ՍՍՀՄ-ում այս կամ այն լեզվի ուսումնասիրության հարցում ոչ մի հարկադրանք կամ սահմանափակում գոյություն չունի։

ՍՄԿԿ ազգային ծրագիրը և ինտերնացիոնալիստական քաղաքականությունը խեղաթյուրվում է նաև արտասահմանում հրատարակվող «Հայրենիք», «Ալիք», «Յուսաբեր» և այլ թերթերի էջերում։

Ազգային հարցում դաշնակցության ծրագրային դրույթները խարսխվում են բուրժուական ազգայնականության, եսամոլության, թշնամության ու անվստահության սկզբունքների վրա։ «...Ժողովուրդները, ազգերը և պետությունները իրենց փոխադարձ հարաբերությունների մեջ չեն սիրում մեկը մյուսին, այլ ունեն պայմանական փոխադարձ հարգանք ու բարեկամություն, որոնք հիմնված են նրանց քաղաքական-տնտեսական և մշակութային փոխադարձ շահերի վրա։ Եթե այդ շահերը վտանգվում են և վնասվում, խաթարում և վերանում է նաև նրանց փոխադարձ հարգանքն ու բարեկամությունը... այդ բարեկամությունը վեր է ածվում փոխադարձ թշնամանքի»[29]։ Դաշնակցությունը ևս ազգերն ու ազգային շարժումները հայտարարում է հավիտենական, ժխտում նրանց կապը բարձրացող կապիտալիզմի հետ։ Ըստ Վ. Նավասարդյանի՝ «Մեզ համար հավիտենական արժեք մըն էր ազգը, մինչդեռ բոլշևիզմը այն կընկատեր առժամանակյա երևույթ մը»[30]։

Վ. Նավասարդյանին առանձնապես վախեցնում է Կ. Մարքսի և Վ. Ի. Լենինի այն միտքը, թե ազգը բուրժուական պատմական դարաշրջանի ծնունդ է

---

27 Экономика и культура Армении к 50-летию Великого Октября, Ереван, 1967, стр. 311.

28 Народное хозяйство СССР в 1969 г., М., 1970, стр. 717.

29 «Ալիք», 6. IV. 1963։

30 Վ. Նավասարդյան, Բոլշևիզմը և դաշնակցությունը, Գահիրե, 1949, էջ 16։

և «դրամատիրության խորտակումով և ընկերավարության յաղթանակով»[31] այն ընդմիշտ պետք է չքանա։ Նման «տեսաբանները» փորձում են «ապացուցել», որ մարքսիզմ-լենինիզմի, ՍՄԿԿ-ի համար ազգ և ազգային հարց գոյություն չունի։

Ս. Վրացյանը կեղծելով Հայաստանում սովետական կարգերի հաստատման փաստերը, փորձում է ապացուցել, որ հայ մարքսիստները դեմ էին ազգի ինքնորոշման իրավունքին։ Նա գրում է. «ոչինչ չեն ճանաչում հայ մարքսիստները, բացի սովետական իշխանությունից և պատահական չէ, որ նրանք իրենց ծրագրում էլ Անդրկովկասի ժողովուրդների համար չէին նախատեսել ազգային ինքնորոշման և անկախության պահանջ»[32]։

Դաշնակցական մամուլում ՍՄԿԿ ծրագրի քննադատությամբ հանդես եկան Ռ. Դարբինյանը, Ա. Ամուրյանը, Ա. Սահակյանը և ուրիշներ։ Նրանք փորձում են այն որակել որպես ՍՍՀՄ ժողովուրդների ռուսականացման ծրագիր։

«Հայաստանի ներկան և անոր ապագան» հոդվածում Արամ Սահակյանն անկարող լինելով ժխտել Սովետական Հայաստանի տնտեսական և կուլտուրական նվաճումները, փորձում է այն ներկայացնել ոչ որպես սոցիալիզմի արդյունք, այլ միայն համամարդկային, համընդհանուր առաջադիմության արտահայտություն[33]։

Կյանքը, կոմունիստական շինարարության պրակտիկան հիմնովին ժխտում են հակակոմունիզմի գաղափարախոսությունը, պարզորոշ երևան հանում կոմունիստական կուսակցության ազգային քաղաքականության իսկական ուղղությունը, ՍՍՀՄ ազգերի ու ազգությունների տնտեսական ու կուլտուրական զարգացման հիմնական տենդենցները։

ПРОТИВ ФАЛЬСИФИКАЦИИ НАЦИОНАЛЬНОЙ ПОЛИТИКИ КПСС

М. М. АКОПЯН

Резюме

Национальный вопрос является важнейшим участком идеологической борьбы. Несмотря на различные формы буржуазной фальсификации ленинской национальной политики, основным принципом апологетов буржуазии является антисоветизм, стремление отразить в кривом зеркале интернациональную политику КПСС, ослабить всемирно-историческое значение решения национального вопроса в СССР.

Буржуазные идеологи В. Коларз, Дж. Уиллер, Р. Пайпс, Г. Раух и др. фальсифицируют исторические факты, стараются нанести основной удар по дружбе народов СССР, по национальной политике КПСС. Национальная программа и политика Коммунистической партии представляются в ложном свете также и буржуазно-националистической партией дашнакцутюн в работах В. Навасардяна, С. Врацяна, Б. Папазяна и др.

В настоящей статье на основе богатого фактического материала нами раскрываются основные направления политики партии, истинные тенденции экономического и культурного развития наций и национальностей в СССР, обнажается истинное лицо фальсификаторов истории.

31 Նույն տեղում, էջ 19։

32 Ս. Վրացյան, Կյանքի ուղիներով, հ. Զ. Պեյրութ, 1967, էջ 332։

33 «Հայրենիք», 14. X. 1961։